ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԺՈՐԱ ԷԴՎԱՐԴԻ ՍԱԳԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՀՈՐԻՆՎԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԺԸ. 00.01 «Ճարտարապետություն» մասնագիտությամբ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2025

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

НАЦИОНАЛЬНЫЙ УНИВЕРСИТЕТ АРХИТЕКТУРЫ И СТРОИТЕЛЬСТВА АРМЕНИИ

ЖОРА ЭДВАРДОВИЧ САГАРЯН

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ОБЕСПЕЧЕНИЯ КОМПОЗИЦИОННОЙ ЦЕЛОСТНОСТИ ПЛОЩАДИ РЕСПУБЛИКИ ЕРЕВАНА

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата архитектуры по специальности 18.00.01-«Архитектура»

ЕРЕВАН 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում

Գիտական ղեկավար՝ ճարտ. դոկտոր, պրոֆեսոր
Կ. Ռ. Ազատյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ճարտ. դոկտոր, պրոֆեսոր **Դ.Գ.Քերթմենջյան**
ճարտ. թեկն., պրոֆեսոր **Ա. Մ. Մանուկյան**

Առաջատար կազմակերպություն՝ **«ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԲԸ**

Պաշտպանությունը կայանալու է 2025 թվականի հուլիսի 30-ին ժամը 14:00-ին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանին կից գործող ՀՀ ԲՈԿ-ի «ճարտարապետություն» 029 մասնագիտական խորհրդում:
Հասցեն՝ 0009, ք. Երևան, Տերյան փ. 105:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՃՇՀԱՀ-ի գիտական գրադարանում: Հասցեն՝ 0079, ք. Երևան Մառի փող. 17/1:
Սեղմագրին կարելի է ծանոթանալ ՃՇՀԱՀ-ի պաշտոնական կայքում՝ www.nuaca.am
Սեղմագիրն առաքված է 2025 թվականի հունիսի 30-ին:
Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ ճարտ. թեկնածու, ասիստենտ

Դ. Ս. Նահատակյան

Тема диссертации утверждена в Национальном университете архитектуры и строительства Армении

Научный руководитель: доктор арх., профессор
К. Р. Азатян

Официальные оппоненты: доктор арх., профессор **Д. Г. Кертменджян**
канд. арх., профессор **А. М. Манукян**

Ведущая организация: **"ЕРЕВАНПРОЕКТ" ЗАО**

Защита состоится 30-го июля 2025 года в 14:00 часов на заседании специализированного совета 029 - «Архитектура» ВАК РА, действующего при Национальном университете архитектуры и строительства Армении (НУАСА).
Адрес: 0009, г. Ереван, ул. Теряна 105.
С диссертацией можно ознакомиться в научной библиотеке НУАСА по адресу: 0079, г. Ереван, ул. Марра 17/1.
С авторефератом можно ознакомиться на официальном сайте НУАСА: www.nuaca.am
Автореферат разослан 30-го июня 2025 г.
Ученый секретарь Специализированного совета: кандидат арх., ассистент

Д. С. Наатакян

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը

Ժամանակակից քաղաքային հրապարակը՝ իր գործառնական և ճարտարապետական նշանակությամբ, պատմությունը սկսել է անտիկ շրջանից: Ինչպես քաղաքային բոլոր հանրային տարածքները, հրապարակները ևս ժամանակի ընթացքում անխուսափելիորեն զարգացել և ձևափոխվել են՝ կրելով ֆունկցիոնալ ու հորինվածքային մի շարք փոփոխություններ: Դրանք մշտապես կարևոր գաղափարական և գործառական նշանակություն են ունեցել քաղաքային իրականությունում՝ ապահովելով քաղաքի կերպարը և հանդիսանալով մշակութային, վարչական, հասարակական ու սոցիալական կյանքի կենտրոններ, ինչպես նաև քաղաքի կերպարը բևեռացնող հորինվածքային հանգույցներ:

Ժամանակակից քաղաքներում հրապարակները, ինչպես և այլ խոշոր հանրային տարածքները, բախվում են տարբեր խնդիրների՝ գլոբալիզացիայի և տեխնոլոգիաների զարգացման արդյունքում հանրային կյանքի տարբեր դրսևորումների անկումներ, սոցիալական շփումների ձևափոխություններ, անհատի և տեղանքի ինքնության կորուստ և այս ամենի հետևանքով՝ հրապարակի ֆունկցիոնալ բովանդակության աղքատացում: Այս համատեքստում յուրահատուկ է Երևանի կենտրոնական՝ Հանրապետության հրապարակը, որը ձևավորվել է ոչ միայն որպես քաղաքի վարչական-հասարակական կենտրոն, այլև ի սկզբանե դիտարկվել է որպես վերածնվող պետության ու վերջինիս մայրաքաղաքի գլխավոր խորհրդանիշ և երկար տարիներ առաջնորդել է քաղաքային մասշտաբն ու էտալոն հանդիսացել քաղաքի կառուցապատման հորինվածքային-գեղարվեստական բոլոր մակարդակներում: Սակայն վերջին տասնամյակներում անհատական շահերի հանրայինի նկատմամբ գերիշխանության և լրջագույն խնդիրների հանդեպ հանրային կարծիքի ակնհայտ անտարբերության պայմաններում հրապարակը սկսել է կորցնել իր երբեմնի նշանակությունն ու որակները: Կառույցների մեծամասնության սեփականաշնորհման, հարակից գոտիների ինտենսիվ կառուցապատման, քաղաքաշինության ասպարեզի կարգավորումների անորոշության և կառավարման բացթողումների արդյունքում տեղի է ունեցել հրապարակի նշանակության անկում թե՛ քաղաքի կերպարում, թե՛ քաղաքային կյանքում մասնակցության իմաստով: Այն կորցրել է քաղաքի ճարտարապետության բոլոր տեսակետներից իր թելադրող դերակատարությունը, ավանդաբար բնորոշ ֆունկցիոնալ բազմազանությունը և, ինչպես աշխարհի բազմաթիվ քաղաքների հրապարակների պարագայում, վերածվել է տրանսպորտային հանգույցի:

Նշվածը մտահոգիչ է և պահանջում է լուծումներ: Մյուս կողմից էլ հանրության արժեհամակարգի վերականգնման, քաղաքացիական հասարակության կայացման, սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման և պետության ամրապնդման

մարտահրավերների պայմաններում, որոնք չափազանց արտահայտված են Հայաստանի Հանրապետության ներկա իրականությունում, խիստ կարևոր է մայրաքաղաքի գլխավոր հրապարակի խորհրդանշական նշանակության վերականգնումը, տարբեր որակների բարձրացումը և այնտեղ լիարժեք կյանքի վերածնունդը: Եվ ստեղծված իրավիճակում ակնհայտ է խնդիրների կարգավորմանը և քաղաքի ու պետության խորհրդանիշի համապատասխան որակների վերականգնմանն ուղղված վերլուծությունների մշակման անհրաժեշտությունը, ինչին էլ նվիրված է սույն աշխատությունը:

Հրապարակների առաջացման պատմությանը և հորինվածքային զարգացմանը նվիրված աշխատությունների շրջանակը լայն է: Այս համատեքստում սույն աշխատանքը հիմնվել է Վիտրուվիոսի, Անդրեա Պալլադիոյի, Անդրեյ Բունինի, Տատյանա Սավարենսկայայի, Լեոնարդո Բենևոլոյի, Կամիլլո Զիտտեյի, Պոլ Ցուկերի, Սպիրո Կոստոֆի, Քրիստիան Նորբերգ-Շուլցի, Ջոն Քամփի, Դևիդ Ուատկինի, Ռուդոլֆ Ուիտկովերի, Ջոն Բրայան Ուորդ-Պերկինսի, Ջեյմս Սլոսս Ակերմանի, Ռոբերտ Ֆյուռնո Ջորդանի և այլ հեղինակների հետազոտությունների վրա: Գրականության շրջանակում դիտարկվել են նաև հետևյալ ուղղությունները՝ հրապարակների գաղափարական և գործառնական նշանակությունը, ժամանակակից քաղաքների հրապարակներում և այլ խոշոր հանրային տարածքներում ծագած խնդիրները, սոցիալական շփումների ձևափոխությունները, անհատի և տեղանքի ինքնության կորուստը, հրապարակի ֆունկցիոնալ բովանդակության աղքատացումը, քաղաքի ճարտարապետության մեջ հրապարակի թելադրող դերակատարության և ֆունկցիոնալ բազմազանության կորուստը, տրանսպորտային հանգույցի վերածվելու հանգամանքները, հրապարակների խորհրդանշական նշանակության վերականգնման և լիարժեք կյանքի վերածննդի հարցերը: Մյուս կողմից՝ Երևանի գլխավոր հրապարակի ձևավորման պատմությունը, համակառույցի հորինվածքային առանձնահատկությունները, շենքերի ճարտարապետությունը և ձևափոխությունները լուսաբանող աշխատանքները սակավաթիվ են: Դրանց շարքում առանձնանում է համակառույցի համահեղինակ Մ. Գրիգորյանի մենագրությունը, որտեղ հետաքրքիր մանրամասներով ներկայացվում են հրապարակի առաջացման և ձևավորման շրջանները: Ուշագրավ են Է. Տիգրանյանի հոդվածները, որոնք անդրադառնում են հրապարակի հատակագծային և հորինվածքային խնդիրներին: Իրենց աշխատություններում Երևանի գլխավոր հրապարակին են անդրադարձել նաև Վ. Հարությունյանը, Մ. Հասրաթյանը, Ա. Մելիքյանը, Կ.Հովհաննիսյանը, Ա. Գրիգորյանը, Հ. Իսաբեկյանը, Ռ. Իսրայելյանը, Մ. Մազմանյանը, Լ. Դոլուխանյանը, Է. Պապյանը, Կ. Բալյանը, ինչպես նաև Ա. Հարությունյանն իր՝ Երևանի հրապարակների ձևավորման հիմնախնդիրներին նվիրված թեկնածուական ատենախոսությունում: Երևանի գլխավոր հրապարակին նվիրված աշխատությունների

շարքում ուշադրության է արժանի Գ. Ռաշիդյանի վերլուծական հետազոտությունը: Այստեղ, բացի համակառույցի ճարտարապետության տարբեր յուրահատկությունների մեկնաբանությունից, մանրամասն հետազոտվում են առաջացած որոշակի խնդիրներ և նախանշվում է հետագա զարգացման առաջնահերթություններ մշակելու անհրաժեշտությունը, իսկ առանձին խնդիրների դեպքում (օրինակ՝ հրապարակի մասշտաբը) առաջարկվում են գիտականորեն հիմնավորված լուծումներ: Սակայն, հատկապես վերջին տասնամյակներում, Երևանի Հանրապետության հրապարակի վերաբերյալ կատարված հայեցակարգային առաջարկների համակարգման, վերլուծության և արդյունքների գնահատման աշխատանքներ փաստացի չկան: Ընդհանուր առմամբ չի կատարվել նաև հրապարակում ներկայում առաջացած խնդիրների ընդհանրացում, և հորինվածքային ամբողջականության արդի խնդիրները մնացել են բաց:

Հետազոտության նպատակը

Հետազոտության նպատակն է ընդհանրացնել Երևանի Հանրապետության հրապարակի հորինվածքային ամբողջականության արդի խնդիրները և վեր հանել համակառույցի հետագա զարգացման առաջնահերթությունները:

Հետազոտության հիմնական խնդիրները

- Ուսումնասիրել հրապարակների առաջացման պատմությունը և ձևավորման սկբունքները:
- Ընդհանրացնել Երևանի Հանրապետության հրապարակի և հարակից տարածքների ձևավորման գործընթացը և կատարել համակառույցի ճարտարապետական զարգացման պարբերացում:
- Հետազոտել Երևանի Հանրապետության հրապարակի ներկա իրավիճակը և վեր հանել ծագած խնդիրները:
- Վերլուծել Երևանի Հանրապետության հրապարակի հորինվածքային ամբողջականության խնդիրները և դրանց վերաբերյալ տարբեր ժամանակներում առաջարկված լուծումները:
- Վեր հանել Երևանի Հանրապետության հրապարակի համակառույցի հետագա զարգացման առաջնահերթությունները:

Հետազոտության օբյեկտը Երևանի Հանրապետության հրապարակն ու հարակից տարածքներն են:

Հետազոտության առարկան՝ ճարտարապետական համակառույցների հորինվածքային ամբողջականության խնդիրները:

Հետազոտության մեթոդաբանությունը

Աշխատանքը կատարվել է թեմայի վերաբերյալ տեղական և միջազգային գիտական հրապարակումների, էլեկտրոնային տեղեկատվական աղբյուրների, արխիվային, գրաֆիկական, քարտեզագրական նյութերի և բնօրինակ

ուսումնասիրությունների հիման վրա՝ տեսական հետազոտման, մոդելավորման, համեմատական վերլուծության, համակարգման, ընդհանրացման գիտական մեթոդներով և համակարգչային ծրագրերի կիրառմամբ (Autodesk Revit, Autodesk AutoCAD, Adobe Photoshop, Adobe Acrobat, Microsoft Word):

Հետազոտության աշխարհագրական և ժամանակագրական սահմանները

Ատենախոսությունն ընդհանուր առմամբ ընդգրկում է աշխարհագրական և ժամանակագրական լայն շրջանակ, սակայն հիմնականում կենտրոնանում է Երևան քաղաքի Հանրապետության հրապարակի և հարակից տարածքների վրա՝ 20-րդ դարի սկզբից մինչև մեր օրերն ընկած ժամանակահատվածում:

Հետազոտության նորույթը

Ատենասխոսությունում առաջին անգամ

- կատարվել է Երևանի Հանրապետության հրապարակի համակառույցի ճարտարապետական զարգացման պարբերացում,
- բացահայտվել և վերլուծության են ենթարկվել հրապարակի հորինվածքային ամբողջականության արդի խնդիրները,
- համակարգվել են համակառույցի զարգացման ողջ ժամանակահատվածի ընթացքում մշակված առաջարկները,
- կատարվել է բացահայտված խնդիրների և կատարված առաջարկությունների համեմատական վերլուծություն,
- մշակվել են հրապարակի համակառույցի հետագա զարգացման առաջնահերթությունները:

Աշխատանքի գործնական արժեքը և արդյունքների հնարավոր ներդրումը

Աշխատանքի արդյունքները կարող են հիմք հանդիսանալ Երևանի Հանրապետության հրապարակի համակառույցի և հարակից գոտիների հետագա զարգացման բոլոր մակարդակի գործընթացների առաջադրանքների ձևավորման համար, ինչպես նաև կիրառվել առհասարակ հրապարակների ճարտարապետական համակառույցների բազմակողմանի խնդիրների հետազոտության և վերլուծության ասպարեզում:

Հետազոտության արդյունքները ներդրվել են հրատարակված 4 գիտական հոդվածներում, 2022-2025 թվականների ընթացքում ՃՇՀԱՀ-ի «Ճարտարապետական նախագծման և ճարտարապետական միջավայրի դիզայնի» ամբիոնում կատարված զեկուցումներում և նույն համալսարանում իրականացվող, պետբյուջեից ֆինանսավորվող «Շինարարության և ճարտարապետության գիտահետազոտական լաբորատորիայի պահպանում և զարգացում» ծրագրի աշխատանքներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը

Ատենախոսությունը կազմված է 131 էջ տեքստային մասից և 37 էջ հավելվածներից: Տեքստային մասը ներառում է ներածություն, երեք գլուխ, եզրակացություն և 173 անուն օգտագործված գրականության ցանկ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են հետազոտության նպատակը, խնդիրները, տեսական և մեթոդաբանական հիմքը, գիտական նորույթը, գիտական ու գործնական նշանակությունը:

Առաջին գլխում ընդհանրացվել են հրապարակների զարգացման պատմությունը և ձևավորման առանձնահատկությունները, կատարվել է հորինվածքային վերլուծություն: Ներկայացվել է տարբեր ժամանակաշրջանների և վայրերի հրապարակների առաջացման և զարգացման գործընթացը: Արձանագրվել է, որ ժամանակակից քաղաքային հրապարակն իր գործառական և ճարտարապետական նշանակությամբ, սկիզբ է առել անտիկ շրջանից՝ պատմության ընթացքում անցնելով զարգացման տարբեր շրջաններ և կրելով մի շարք ֆունկցիոնալ ու հորինվածքային փոփոխություններ: Հրապարակների հայտնի ամենավաղ օրինակ է դիտարկվել հունական ագորան: Այն բաց տարածք էր քաղաքի կենտրոնում, որտեղ ծավալվում էր քաղաքական, սոցիալական և տնտեսական գործունեություն: Հրապարակների զարգացման հաջորդ շրջանը սկիզբ է առնում Հին Հռոմում, երբ ստեղծվում է հռոմեական ֆորումը, որն իրենից ներկայացնում էր հունական ագորայի և ակրոպոլիսի սինթեզը: Հաջորդ կարևոր շրջանը միջնադարն է, երբ ձևավորվում են առևտրային հրապարակները, որոնք տարածում են ստանում մեծամասամբ եվրոպական երկրներում: Իսկ Վերածննդի և Բարոկկոյի շրջաններում գերակշռում են իտալական պիացցաները: Ուշագրավ է կլասիցիզմի շրջանը: 19-20-րդ դարերը ևս կարևոր են հրապարակների հորինվածքային և ֆունկցիոնալ զարգացման համար: Եվ վերջապես նոր ժամանակները, որտեղ կարծես թե հրապարակները կորցնում են իրենց առաջնային դերը հասարակական կյանքում՝ չունենալով ֆունկցիոնալ հստակ նշանակություն:

Կատարվել է հրապարակի հորինվածքի ձևավորման վրա ազդող բնութագրերի վերլուծություն՝ տարբեր օրինակների համեմատության միջոցով: Հետազոտության համար ընտրվել են տարբեր դարաշրջանների և վայրերի հրապարակներ: Համեմատական վերլուծության արդյունքում կազմվել է համապատասխան աղյուսակ: Հրապարակներն այստեղ տեղադրվել են ըստ ժամանակագրության՝ մ.թ.ա. 6-րդ դարից մինչև 20-րդ դարը, և խմբավորվել՝ ըստ շրջանների: Հորինվածքային վերլուծության ժամանակ օգտագործվել է հրապարակի երեք ցուցանիշ՝ ա) լայնության և երկարության հարաբերությունը, բ) լայնության և

շրջապատող կառուցապատման բարձրության հարաբերությունը, գ) կառուցապատման պարագծի բաց և փակ հատվածների երկարությունների հարաբերությունը:

Հետազոտությունը թույլ է տվել վեր հանել որոշակի բնորոշ հատկանիշներ, որոնք ազդում են հրապարակի հորինվածքի ձևավորման, մասնավորապես տարածության ընկալման, պարփակվածության աստիճանի, ճարտարապետահորինվածքային կերպարի և մասշտաբի վրա: Այդ հատկանիշներն են՝

- **հորինվածքային սկզբունքը**. կախված տեսակից՝ հիմնային դեր ունի հրապարակների ճարտարապետահորինվածքային լուծումների և տարածության ձևավորման գործում: Պատմական տարբեր ժամանակաշրջաններում վեր են հանվել կիրառված տարբեր հորինվածքային սկզբունքներ՝ ասիմետրիկ, սիմետրիկ կամ դիսիմետրիկ:
- **Դոմինանտ կառույցի առկայությունը**. ըստ դոմինանտի առկայության և շրջապատող կառուցապատման հետ դրա հարաբերության՝ հրապարակները դասվել են չորս տեսակի. ա) շրջապատող կառուցապատումն ունի նույն բարձրությունը, և կա հստակ ընդգծված դոմինանտ կառույց, բ) շրջապատող կառուցապատումն ունի նույն բարձրությունը, և չկա հստակ ընդգծված դոմինանտ կառույց, գ) շրջապատող կառուցապատումն ունի տարբեր բարձրություններ, և կա հստակ ընդգծված դոմիանտ կառույց, դ) շրջապատող կառուցապատումն ունի տարբեր բարձրություններ և չկա հստակ ընդգծված դոմիանտ կառույց: Պատկանելով այս տեսակներից որևէ մեկին՝ հրապարակներն ունենում են տարբերվող հորինվածքի և տարածության ձևավորում:
- **Կենտրոնական տարրի առկայությունը** փոխում է հրապարակում տարածության ընկալումը: Կենտրոնական տարրն ունի հորինվածքը միավորող նշանակություն, և հրապարակը ինչ-որ տեղ ձևավորվում է նաև դրա շուրջ:
- **Տարածության պարփակվածության աստիճանը** մեծ դեր է խաղում հրապարակի միջավայրի ընկալման գործում: Ըստ դրա՝ հրապարակները դասվել են երեք տեսակի՝ ա) բաց, բ) կիսափակ, գ) փակ: Պատկանելով այս տեսակներից մեկին՝ հրապարակներն ունենում են տարբեր հորինվածքային ձևավորում և տարածության ընկալում:
- **Համաչափական հարաբերությունները**. լայնության և երկարության հարաբերության ցուցանիշով հրապարակներն, ըստ հատակագծի ձևի, դասվել են երեք տեսակի՝ ա) սեղմված, բ) ձգված, գ) քառակուսի հատակագծով: Իսկ լայնության և շրջապատող կառուցապատման բարձրության հարաբերության ցուցանիշով հրապարակներն, ըստ պարփակվածության աստիճանի, դասվել են երկու տեսակի՝ ա) մեծ հարաբերությամբ բաց հրապարակ, բ) փոքր հարաբերությամբ պարփակ հրապարակ:

- **Ֆունկցիոնալ նշանակությունը.** մեծ դեր է խաղում հրապարակի ճարտարապետահորինվածքային կերպարի ձևավորման և մասշտաբի ընտրության գործում: Հենց այդ պատճառով էլ վարչական և կրոնական նշանակություն ունեցող հրապարակներն ունենում են ավելի մեծ մասշտաբ և ավելի խիստ կամ մոնումենտալ ճարտարապետական կերպար:
- **Դոմինանտ կառույցի նշանակությունը.** մեծ ազդեցություն ունի հրապարակի հորինվածքի ձևավորման, ինչպես նաև ճարտարապետական կերպարի ստեղծման գործում: Մեծամասամբ դոմինանտ կառույցի նշանակությունը կախված է բուն հրապարակի նշանակությունից:

Հրապարակների հորինվածքի վրա ազդող բնութագրող հատկանիշների հետազոտությունը վկայում է այն մասին, որ նշվածներից յուրաքանչյուրը յուրովի է ազդում հրապարակների տարածության ընկալման, պարփակվածության աստիճանի, ինչպես նաև ճարտարապետահորինվածքային կերպարի և մասշտաբի վրա: Նշված հատկանիշների տեսանկյունից քննարկվել են նաև Երևանի Հանրապետության հրապարակի հորինվածքային հատկությունները:

<u>Երկրորդ գլխում</u> քննարկվել է Երևանի Հանրապետության հրապարակի զարգացման պատմական գործընթացը՝ անդրադառնալով վերջինիս ձևավորման նախադրյալներին, ժամանակագրությանը, գաղափարական յուրահատկություններին, ճարտարապետությանը, նախնական մտահղացումից շեղումներին և հարակից միջավայրի ձևափոխություններին: Նյութը դիտարկվել է որոշակի թեմատիկ ընդհանրացումներով՝ համակառույցի հեղինակը և նրա գործունեությունը, քաղաքի 1924 թվականի գլխավոր հատակագիծը և հետթամանյանական շրջանի ձևափոխությունները:

Ներկայացվել է Ալեքսանդր Թամանյանի պետերբուրգյան մոտ քառորդդարյա և հայաստանյան (1919 թվականի հուլիսից) բուռն ստեղծագործական և հասարակական-կազմակերպչական գործունեությունը: Արձանագրվել է, որ ճարտարապետը, ուսումնասիրելով և բարոյապես ըմբռնելով հայ ճարտարապետության բնորոշ գծերն ու ինքնատիպությունը, կարողացել է վարպետորեն հիմք դնել ձևով ազգային սովետահայ ճարտարապետությանը:

Քննարկվել է Թամանյանի կազմած Երևանի առաջին գլխավոր հատակագիծը, որը հաստատվել է 1924 թվականի ապրիլի 3-ին Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի կողմից: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ վարպետը Երևանի գլխավոր հատակագիծը մշակել է ոչ թե ազատ, չկառուցապատված գոտում, այլ արդեն գոյություն ունեցող ուղղանկյուն փողոցային ցանցով, փոքր թաղամասերի կառուցապատումով և առանձին, համեմատաբար մեծ կառույցներով հին քաղաքի տարածքում, այսինքն՝ ըստ էության դա վերակառուցման նախագիծ էր: Նախատեսվում էր քաղաքի կենտրոնի արմատական վերափոխում՝ միաժամանակ պահպանելով

գլխավոր փողոցների պատմական ուղղություններն ու ճարտարապետական տեսակետից արժեքավոր հուշարձանները: Երևանի գլխավոր հատակագիծն ուներ հորինվածքային որոշակի կառուցվածք: Դրա ողնաշարը՝ քաղաքը, հյուսիսից հարավ կիսող առանցքն էր, որը կազմված էր միմյանց հաջորդող մի շարք հրապարակներից, փողոցներից ու պողոտաներից:

Ընդհանրացվել են քաղաքի հորինվածքային փոփոխությունները Թամանյանի մահից և մայրաքաղաքի գլխավոր ճարտարապետ Ն. Բունիաթյանի ձերբակալությունից հետո: Պարզաբանվել է, որ ստալինյան շրջանի հետագա տարիներին հայ ճարտարապետության լեզվում և Երևանի գլխավոր հատակագծում կատարվել են տոտալիտար ճարտարապետությանը բնորոշ վերափոխումներ՝ խեղաթյուրելով քաղաքաշինական լուծումների ազգային նշանակությունը: Երևանում կառուցվել է նոր հասարակական կենտրոն: Թամանյանական բոլոր կառուցվածքներից հեռու՝ Բաղրամյան պողոտայի առանցքի երկայնքի երկու կողմից, կառուցվել են Հայաստանի Կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի (այժմ՝ ՀՀ Ազգային ժողով), Գերագույն Խորհրդի նախագահության (այժմ՝ ՀՀ նախագահի նստավայր) և Գիտությունների ակադեմիայի շենքերը: Վերացվել է քաղաքի հորինվածքային դոմինանտները՝ Կառավարական տունը և Ժողտունը միացնող անկյունագծային առանցքը: Ստալինի պողոտայի (այժմ՝ Մաշտոցի պողոտա) առանցքով, քաղաքը շրջապատող հյուսիսային բարձունքի վրա տեղադրվել է Ստալինի հուշարձանը: Հաստատվել է, որ Թամանյանի գլխավոր հատակագիծը՝ նորագույն ժամանակների հայկական քաղաքաշինության գլխավոր ձեռքբերումը, ազգայինից վերափոխվել է տոտալիտարի:

Ներկայացվել են Երևանի Հանրապետության հրապարակի ձևավորման պատմությունը և հորինվածքային առանձնահատկությունները: Ուսումնասիրությունների համաձայն՝ Թամանյանն իր նախագծած քաղաքում նախանշել էր երկու կենտրոնական հրապարակ՝ վարչական և թատերական, որոնք պետք է իրար միացվեին Հյուսիսային պողոտայով: Քաղաքի հատակագծային հորինվածքի կենտրոնում նախատեսվում էր ստեղծել գլխավոր վարչական և հասարակական հրապարակ, որը պետք է կրեր Վ. Լենինի անունը: Հրապարակի հորինվածքային կառուցվածքը հիմնված էր փոխադարձ հատվող երկու առանցքների վրա: Օվալաձև մասի երկայնական առանցքը համընկնում էր Ամիրյան փողոցի ուղղությանը, իսկ լայնական առանցքն անցնում էր Աբովյան և Նալբանդյան փողոցների միջև և համապատասխանում Շահումյանի պուրակի առանցքին: Հատակագծում հրապարակը բաղկացած էր միմյանց ծուլված օվալաձև և սեղանաձև երկու տարածություններից:

Քննարկվել են հրապարակի համակառույցի բաղադրիչները և դրանց ճարտարապետությունը, ճարտարապետաքաղաքաշինական նախնական

մտահղացումից շեղումները, հարակից միջավայրի ձևափոխությունները: Վերլուծության են ենթարկվել յուրաքանչյուր կառույցում ճարտարապետի ձեռագրի և մոտեցման առանձնահատկությունները՝ դիտարկելով դրանք քաղաքաշինական հարցերի համատեքստում: Հաստատվել է, որ, նշելով քաղաքի հատակագծման հիմնական հանգույցները, Թամանյանը միաժամանակ ձեռնամուխ է եղել նաև քաղաքի առանցքային նշանակության կառույցներից մեկի՝ Կառավարական տան նախագծմանը, որն էլ, իր հերթին, կանխորոշել է ամբողջ հրապարակի ճարտարապետական լուծումը:

Ներկայացվել են Երևանի գլխավոր հրապարակի ճարտարապետական, ծավալատարածական ու հորինվածքային խնդիրները նախագծման և կառուցման ժամանակաշրջանում, որոնց առնչվել են Ալեքսանդր Թամանյանը և հաջորդող համահեղինակները: Արձանագրվել են հետևյալ ձևափոխությունները: Կառավարական տան հորինվածքից հանվել է կենտրոնական բաշխիչ վեստիբյուլի աշտարակը, որը նախատեսված էր՝ հրապարակում գերիշխելու և Հյուսիսային պողոտայի առանցքը Ժողտնից դեպի Արարատ լեռ ուղղելու համար: Հրապարակի անկյունագծային ասիմետրիկ հորինվածքը փոխվել է հիմնական առանցքներով սիմետրիայի. երկայնական առանցքով Կառավարական տան դիմաց հայտնվել է դրա հայելային պատկերը, իսկ լայնական առանցքով՝ Լենինի հուշարձանը և Մշակույթի տունը: Ա. Թամանյանը գլխավոր համակառույցի նախագծի մշակման ընթացքում, բացի հրապարակում գոյություն ունեցող փողոցներից, նախատեսել էր անցկացնել ևս երկու ճառագայթաձև փողոցներ: Նախատեսվող փողոցներից մեկը պետք է անցներ Կապի և Արհմիության տների միջև գտնվող առանցքով, որը ուղղված էր դեպի Արարատ լեռը, իսկ մյուսը՝ վերջինիս սիմետրիկ Արմենիա հյուրանոցի գլխավոր կամարաձև բացվածքի առանցքով, սակայն այդ գաղափարը չեղարկվել է: Հաջորդիվ Կապի և Արհմիության տան երկու առանձին ծավալները իրար են միացվել կամարակապ բացվածքով՝ նվազագույնի հասցնելով տեսադաշտը: Իսկ ավելի ուշ Արարատի հեռանկարն ամբողջությամբ փակվել է մեծ շենքով և դուրս է մնացել հրապարակի համակառույցից:

Ուսումնասիրվել են հետխորհրդային տարիներին հրապարակի շուրջ առաջացած ճարտարապետական, քաղաքաշինական, տրանսպորտային և միջավայրի փոփոխության խնդիրները: Հիմնավորվել է, որ այս շրջանում Երևանի Գլխավոր հրապարակում և հարակից տարածքներում տեղի են ունեցել այնպիսի ձևափոխություններ և նախաձեռնություններ, որոնք նսեմացրել են հրապարակի քաղաքաշինական և հասարակական նշանակությունը: Դրանց շարքում են Լենինի հուշարձանի ապամոնտաժումը, 2003 թվականի վերակառուցման աշխատանքները, Կառավարական 2-րդ տան սեփականաշնորհումը, 2013 թվականի հրապարակի վերակառուցման հայեցակարգային նախագծի հանրապետական բաց մրցույթը, վերջին տասնամյակների ընթացքում հրապարակի հարակից տարածքներում լայն

ծավալներ ստացած բազմահարկ շինարարությունը, ավտոմոբիլային երթևեկության ծավալների ահռելի աճը և այլն:

Կատարվել է Երևանի Հանրապետության հրապարակի համակառույցի ճարտարապետական զարգացման պարբերացում.

- 1924 թվականի ապրիլի 3-ին Հայաստանի Ժողկոմխորհը հաստատում է ակադեմիկոս Ա. Թամանյանի կազմած մայրաքաղաքի գլխավոր հատակագիծը,
- 1926 թվականին դրվում է Հողագործության ժողովրդական կոմիսարիատի (Հողժողկոմ) շենքի հիմքը,
- 1929 թվականին ավարտվում է Հողագործության ժողովրդական կոմիսարիատի (Հողժողկոմ) շենքի շինարարությունը,
- 1931 թվականին Վ. Լենինի հրապարակում Աշխատանքի պալատի նախագծի համար հայտարարվում է փակ մրցույթ,
- 1933 թվականին հրապարակում սկսվում է Կապի տան շինարարությունը,
- 1936 թվականին՝ Ա. Թամանյանի մահից հետո, կայացվում է նախկին Արական գիմնազիայի հին երկհարկանի շենքը պահպանելու որոշում,
- 1938 թվականին սկսվում է Կառավարական տան շինարարությունը,
- 1938 թվականին՝ Ա. Թամանյանի մահից հետո, վերանայվում է Կառավարական տան նախագիծն, ու տեխնիկական և տնտեսական նկատառումներով մերժվում է թմբուկի հղացումը,
- 1938 թվականին հայտարարվում է Համամիութենական բաց մրցույթ՝ Վ. Լենինի հուշարձանի նախագծման համար,
- 1940 թվականի նոյեմբերին՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 20-ամյակի տոնակատարության օրերին, կանգնեցվում է Վ. Լենինի հուշարձանը,
- 1940 թվականին ճարտարապետ Ս. Սաֆարյանին հանձնարարվում է Արարատ տրեստի շենքի նախագծի մշակումը,
- 1941 թվականին ավարտվում է Կառավարական տան շինարարությունը,
- 1952 թվականին ավարտվում է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի մեծ նիստերի դահլիճի շինարարությունը, այն ամբողջությամբ փակում է թաղամասի ուրվագիծը,
- 1954 թվականին ավարտվում է Մշակույթի տան (այժմ՝ Հայաստանի ազգային պատկերասրահ)՝ հրապարակին ուղղված ճակատի վերակառուցման աշխատանքները,
- 1950-ականների կեսին կառուցվում են Արմենիա հյուրանոցը (այժմ՝ Արմենիա Մարիոթ) և դրա նկատմամբ սիմետրիկորեն տեղակայված Արհմիությունների տան շենքը (ճարտ.՝ Մ. Գրիգորյան և Է. Սարապյան)՝ միավորված 30-ականներին կառուցված Կապի տան հետ, որի ճակատը ենթարկվում է արմատական վերակառուցման,

- 1974 թվականին ավարտվում է Մշակույթի տան (այժմ՝ Հայաստանի ազգային պատկերասրահ) շենքի շինարարությունը,
- 1991 թվականին ապամոնտաժվում է Վ. Լենինի արձանը,
- 1996 թվականին ապամոնտաժվում է Վ. Լենինի հուշարձանի պատվանդանը,
- 2003 թվականին հրապարակում կատարվում են վերակառուցման աշխատանքներ,
- 2012 թվականին սեփականաշնորհվում է հրապարակի կարևորագույն շենքերից մեկը՝ Կառավարական 2-րդ տունը,
- 2013 թվականին անցկացվում է հրապարակի վերակառուցման հայեցակարգային նախագծի հանրապետական բաց մրցույթը:

Երևանի Հանրապետության հրապարակում ձևավորված իրավիճակի ուսումնասիրության ամփոփմամբ հիմնավորվել է հորինվածքային համակառույցում ծագած խնդիրների դուրս բերման և վերլուծության անհրաժեշտությունը:

<u>Երրորդ գլխում</u> բացահայտվել են Երևանի Հանրապետության հրապարակի համակառույցում ներկայում առաջացած խնդիրները, որոնք խմբավորվել են հետևյալ հիմնական ուղղություններով. տարածության կազմակերպում և ձևավորում (մուտքային հանգույցների անբավարար կազմակերպվածություն, կենտրոնական հատվածի օգտագործման գրեթե ամբողջական սահմանափակվածություն, շենքերին, շատրվաններին և Շահումյան պուրակին հարող բաց տարածքների օգտագործման անարդյունավետություն, բացօթյա սրճարանների բազմազանություն, շենքերի ներքին բակերի անփույթ վիճակ և անորոշություն, կանաչապատման և ծառապատման ոչ հստակություն), շարժումների կազմակերպում (տրանսպորտային շարժման դոմինանտություն, հետիոտն շարժման չափազանց մեծ սահմանափակություն, տրանսպորտային շարժման կազմակերպման դժվարություն, տրանսպորտային և հետիոտն շարժումների համադրության անարդյունավետություն), տեսողական ընկալում և գեղագիտության ապահովում (համայնապատկերների ծայրահեղ ցածր գեղագիտություն, քաղաքի հորինվածքային առանցքների և կենտրոնների հետ կանխամտածված տեսողական կապերի խեղաթյուրվածություն, շենքերի ճակատներին անթույլատրելի միջամտություններ, տանիքների նյութի անհամապատասխանություն, բաց տարածության կահավորանքի ոչ լիարժեքություն, շենքերի տանիքներում տեղադրված ինժեներական սարքավորումների քողարկվածության բացակայություն), նշանակությանը համապատասխանություն (հրապարակի և որոշակի շենքերի ֆունկցիոնալ նշանակության անորոշություն, պետական նշանակության և մշակութային միջոցառումների կազմակերպման համար կառուցվածքային ոչ լիարժեքություն, հրապարակում տեղադրված դրոշների բովանդակության վերաբերյալ կարգավորումների անորոշություն):

Խնդիրների բազմակողմանի վերլուծությունը հաստատել է, որ դրանց

- առաջացման պատճառներում գերիշխում է կարգավորումների բացակայության հանգամանքը, զգալիորեն շատ են տրանսպորտային շարժմանն առնչվող պատճառները և հրապարակի ձևավորման տարբեր ժամանակներում խնդրին համակարգված մոտեցում ցուցաբերելու բացակայության հանգամանքները, նկատելի են նաև տնտեսական բնույթի և մասնագիտական պատրաստվածության մակարդակի հետ կապված պատճառներ,
- ազդեցությունը հիմնականում տարածվում է ճարտարապետահորինվածքային, ինչպես նաև շարժումների և տարածության կազմակերպման, ֆունկցիոնալ և տնտեսական կառուցվածքի որակների վրա,
- հետևանքներն ու ռիսկերը մեծամասամբ վերաբերվում են հրապարակի խորհրդանշական նշանակության խեղաթյուրմանը, անդրադառնում են նաև ճարտարապետահորինվածքային լուծումներին, միջավայրի հարամարավետությանն ու անվտանգությանը, սոցիալ-տնտեսական և ֆունկցիոնալ բնույթի հարցերին, ճարտարապետական արժեքավոր կառույցների պահպանությանը:

Խնդիրների ընդհանրացումն անհրաժեշտություն է առաջացրել ուսումնասիրել հրապարակի հիմնախնդիրների լուծման վերաբերյալ կատարված հայեցակարգային առաջարկությունները:

Համակարգվել են զարգացման տարբեր ժամանակաշրջաններում առաջացած գաղափարները, առաջարկները և նախագծային մշակումները: Ներկայացվել են 2003 թվականի վերակակառուցման աշխատանքները, վերակառուցման հայեցակարգային մրցույթների արդյունքները, Վ. Լենինի հուշարձանի դատարկ մնացած հատվածի, Կառավարության շենքի չկառուցված աշտարակի, Մշակույթի տան (այժմ՝ Հայաստանի ազգային պատկերասրահ) շենքի և հրապարակի կենտրոնական հատվածի վերակառուցման առաջարկները, ստորգետնյա ուրբանիզացիայի և ստորգետնյա հատվածի թանգարանացման գաղափարները: Մշակված առաջարկների ուսումնասիրությունը թույլ է տվել կատարել դրանց որոշակի համակարգում: Վերջինս ցույց է տվել, որ առաջարկները մեծամասամբ ուղղված են շարժումների կազմակերպման խնդիրների լուծմանը. տարածության կազմակերպման, տեսողական ընկալման և գեղագիտության հարցերին անդրադառնում են մասնակիորեն, իսկ հրապարակի նշանակության համապատասխանության խնդիրները, առհասարակ մնացել են ուշադրությունից դուրս: Վերջինս թույլ է տվել պնդել, որ խնդիրների ընդհանրական լուծման առաջարկություններ փաստացի չկան: Մյուս կողմից էլ առաջարկների վերլուծությունը ցույց է տվել, որ դրանց թերի բնույթը պայմանավորված է առաջին հերթին հստակեցված առաջադրանքի բացակայությամբ: Չկան որոշակիացված նպատակ և խնդիրներ, որոնք ենթակա են լուծման, հետևաբար չեն կարող լինել նաև լուծման բավարար մակարդակի առաջարկներ:

Կատարվել է հետազոտությունում բացահայտված և առաջարկներում դրված խնդիրների վերլուծություն, ընդհանրացում և դրանց համադրության գնահատում: Վերլուծությունը կատարվել է հետևյալ հարցադրումների շուրջ. հրապարակի հորինվածքային համակառույցում բացահայտված խնդիրները և դրանց ընդհանրացումը, խնդիրների առաջացման պատճառները, դրանց ազդեցությունը, հետևանքները և առաջացրած ռիսկերը, հայեցակարգային առաջարկություններում դրված խնդիրները և նույն նախագծերում դրանց լուծման իրատեսականությունն ու արդյունավետությունը: Վերլուծությունն ամփոփվել է հայեցակարգային առաջարկների և սույն հետազոտությունում բացահայտված խնդիրների համադրությամբ և գնահատմամբ: Արդյունքում՝ հիմնավորվել է, որ հրապարակում ծագած խնդիրների բազմությունն ամբողջանում է հորինվածքային միասնության խախտման ընդհանրական խնդրի մեջ: Հաստատվել է նաև, որ զարգացման տարբեր շրջաններում մշակված առաջարկություններում նշված խնդրի հետ կապված բազմակողմանի հարցեր մնացել են անպատասխան, փաստացի ընդհանրական լուծման գաղափարներ չկան, ինչն առաջին հերթին պայմանավորված է հստակեցված առաջադրանքի բացակայությամբ: Հիմնավորվել է հրապարակի համակառույցի հետագա զարգացման գործընթացների համար առաջնահերթությունների առանձնացման անհրաժեշտությունը:

Ատենախոսությունում վեր են հանվել Երևանի Հանրապետության հրապարակի համակառույցի հետագա զարգացման գործընթացի առաջնահերթությունները: Վերջին տասնամյակների ընթացքում մայրաքաղաքում լայն ծավալներ ստացած շինարարության ֆոնին կարևորվել է համակառույցի և բաց տարածության վերարժևորումը: Առաջնային է դառնում նաև տարածական, շարժումների, տեսողական, գեղագիտական, ֆունկցիոնալ և խորհրդանշական սահմանափակումների մշակումը: Շենքերի ճակատներին անթույլատրելի միջամտություններից խուսափելու համար (հատկապես՝ վերջին տարիներին) կարևոր է դարձել կառույցների բազմակողմանի հետազոտությունը, անձնագրավորման հստակեցումը և ճարտարապետական կերպարի վերականգնումը: Հրապարակի քաղաքաշինական և հասարակական դերը վերականգնելու համար հրամայական է դարձել շրջապատող կառուցապատման վերակառուցումը և հետագա կառուցապատման կանոնակարգումը, ինչպես նաև երթևեկության կարգավորումը և ավտոկայանատեղերի դուրս բերումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընդհանրացվել է հրապարակների առաջացման պատմությունը, և տարբեր օրինակների վերլուծության ու համեմատության միջոցով բացահայտվել են դրանց հորինվածքային ձևավորման առանձնահատկությունները: Տարբեր ժամանակներում և տարբեր վայրերում կառուցված մի շարք օրինակների հետազոտությունը թույլ է տվել վեր հանել որոշակի բնորոշ հատկանիշներ, որոնք ազդում են հրապարակի հորինվածքի ձևավորման վրա՝ հորինվածքային սկզբունքը, դոմինանտի առկայությունը և նշանակությունը, կենտրոնական տարրի առկայությունը, տարածության պարփակվածությունը, համաչափական հարաբերություններն ու ֆունկցիոնալ նշանակությունը:

2. Կատարվել է Երևանի Հանրապետության հրապարակի համակառույցի ճարտարապետական զարգացման պարբերացում, և հիմնավորվել է, որ նախագծման ու կառուցման ընթացքում առաջացած առանցքային խնդիրներն իրենց ազդեցությունն են թողել հրապարակի հորինվածքի հետագա զարգացման վրա՝ էականորեն փոխելով Ա. Թամանյանի մտահղացումը: Հրապարակի սկզբնական հորինվածքի ձևափոխության վրա լուրջ ազդեցություն են թողել Կառավարական տան աշտարակի կառուցման չեղարկումը և դրա հորինվածքի կրկնությունը Կառավարական 2-րդ տան շենքում, ինչպես նաև պատկերասրահի բարձրահարկ մասնաշենքի կառուցումը, Հյուսիսային պողոտայի նշանակության փոփոխությունը, հարավային մասում ճառագայթաձև փողոցների գաղափարի չեղարկումը:

3. Բացահայտվել են հրապարակի հորինվածքային համակառույցում ծագած խնդիրները: Դրանք են՝ մուտքային հանգույցների անբավարար կազմակերպվածությունը, կենտրոնական հատվածի օգտագործման սահմանափակվածությունը, բաց տարածքների օգտագործման անարդյունավետությունը, անորոշությունն ու կահավորանքի անբավարարությունը, տարածության կառուցվածքային ոչ լիարժեքությունը, տեղադրված դրոշների բովանդակության անորոշությունը, կանաչապատման անհստակությունը, տարբեր մակարդակների ֆունկցիոնալ նշանակության անորոշությունները, համայնապատկերների և քաղաքի հորինվածքային առանցքների հետ տեսողական կապերի խեղաթյուրվածությունը, շենքերի ճարտարապետության աղավաղումները, տրանսպորտային և հետիոտն շարժումների անհամաչափություններն ու համադրության անարդյունավետությունը:

4. Համակարգվել են հրապարակի հորինվածքային ամբողջականության խնդիրները: Դրանք ընդհանրացվել են տարածության կազմակերպման ու ձևավորման, շարժումների կազմակերպման, տեսողական ընկալման, գեղագիտության ապահովման և նշանակության համապատասխանության խմբերում: Պարզվել է, որ խնդիրների

բազմությունն ամբողջանում է հորինվածքային միասնության խախտման ընդհանրական պրոբլեմի մեջ: Խնդիրների բազմակողմանի վերլուծությամբ վեր են հանվել դրանց առաջացման պատճառների, ազդեցության, հետևանքների ու ռիսկերի հիմնական բնութագրերը: Միևնույն ժամանակ, զարգացման տարբեր ժամանակաշրջաններում մշակված առաջարկների համակարգումը ցույց է տվել դրանց հիմնական ուղղվածությունը և ուշադրությունից դուրս մնացող խնդիրները: Հիմնավորվել է, որ խնդիրների ընդհանրական լուծման առաջարկությունների պակասը պայմանավորված է հստակեցված առաջադրանքի բացակայությամբ:

5. Վեր են հանվել Երևանի Հանրապետության հրապարակի համակառույցի հետագա զարգացման գործընթացի հետևյալ առաջնահերթությունները՝

- համակառույցի և բաց տարածության վերարժևորումը,
- տարածական, շարժումների, տեսողական, գեղագիտական, ֆունկցիոնալ և խորհրդանշական սահմանափակումների մշակումը,
- կառույցների բազմակողմանի հետազոտությունը, անձնագրավորման հստակեցումը և ճարտարապետական կերպարի վերականգնումը,
- շրջապատող կառուցապատման վերակառուցումը և հետագա կառուցապատման կանոնակարգումը,
- երթևեկության կարգավորումը և ավտոկայանատեղերի դուրս բերումը:

Ատենախոսության հիմնական դրույթները հրատարակված են հետևյալ գիտական աշխատանքներում

1. Սագարյան Ժ., Մարկ Գրիգորյան. դասական, ազգային և մոդեռն // ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ, 2020, Հ. II (77) - էջ 84-94:

2. Սագարյան Ժ., Դհերյան Հ., Երևանի Գլխավոր հրապարակի ճարտարապետահորինվածքային խնդիրները նախագծման և կառուցման ժամանակաշրջանում // ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ, 2022, Հ. II (83) – էջ 97-109:

3. Sagaryan. Zh, The History of Square Formation and Peculiarities of Compositional Formation // Journal of Architectural and Engineering Research, 2025, vol. 8 - pp. 34-48. https://doi.org/10.54338/27382656-2025.8-04

4. Sagaryan. Zh, Azatyan. K., Analysis of the current state of the compositional ensemble of Yerevan's central square: challenges and proposed solutions // Budownictwo i Architektura, 2025, vol. 24, no. 2 - pp. 157-189. https://doi.org/10.35784/bud-arch.6934

ЖОРА ЭДВАРДОВИЧ САГАРЯН

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ОБЕСПЕЧЕНИЯ КОМПОЗИЦИОННОЙ ЦЕЛОСТНОСТИ ПЛОЩАДИ РЕСПУБЛИКИ ЕРЕВАНА

РЕЗЮМЕ

В современных городах площади, как и другие крупные общественные пространства, сталкиваются с различными проблемами: упадок различных проявлений общественной жизни в результате глобализации и развития технологий, трансформация форм социальных контактов, утрата идентичности личности и места, а вследствие всего этого - обеднение функционального содержания площади. В этом контексте особенно выделяется площадь Республики Еревана, которая была сформирована не только как административно-общественный центр города, но и изначально рассматривалась как главный символ возрождающегося государства и его столицы, на протяжении долгих лет определяя масштабы города и служа эталоном на всех уровнях композиционно-художественного проектирования застройки. Однако в последние десятилетия, в условиях доминирования личных интересов над общественными и очевидного равнодушия общественного мнения к серьёзным проблемам, площадь начала утрачивать своё прежнее значение и качество. Приватизация большинства зданий, интенсивная застройка прилегающих территорий, неопределённость регулирования в градостроительной сфере и управленческие упущения привели к снижению значимости площади как в городском облике, так и в контексте участия в городской жизни.

В работе обобщена история возникновения площадей, а посредством анализа и сопоставления различных примеров выявлены особенности их композиционного формирования. Исследование ряда примеров, построенных в разное время и в разных местах, позволило определить определённые характерные черты, влияющие на формирование композиции площади: композиционный принцип, наличие и значение доминанты, наличие центрального элемента, степень замкнутости пространства, пропорциональные соотношения и функциональное назначение.

Рассмотрен исторический процесс формирования площади Республики Еревана. Выполнено периодизация архитектурного развития ансамбля площади Республики и обосновано, что ключевые проблемы, возникшие в процессе проектирования и строительства, оказали влияние на дальнейшее развитие композиции площади, существенно изменив первоначальный замысел Александра Таманяна. Изучены архитектурные, градостроительные, транспортные и средовые проблемы, возникшие вокруг площади в постсоветский период. Обосновано, что в этот период на Главной площади Еревана и прилегающих территориях произошли такие преобразования и инициативы, которые обесценили градостроительное и общественное значение площади.

Выявлены актуальные проблемы в композиционном ансамбле площади Республики Еревана, которые сгруппированы по следующим основным направлениям: организация и формирование пространства, организация потоков движения, визуальное восприятие и обеспечение эстетики, соответствие назначению.

Систематизированы идеи, предложения и проектные разработки, возникшие в разные периоды развития площади Республики. Проведён анализ проблем, выявленных в исследовании и заложенных в предложениях, который завершился выработкой концептуальных предложений на основе сопоставления и оценки выявленных проблем.

Установлено, что разнообразие проблем сводится к общей проблеме нарушения композиционного единства. Многосторонний анализ проблем позволил определить их основные характеристики: причины возникновения, влияние, последствия и риски. Одновременно систематизация предложений, разработанных в разные периоды, показала их основную направленность и нерешённые вопросы. Обосновано, что нехватка предложений по комплексному решению проблем обусловлен отсутствием чёткого задания.

Работа завершается выявлением приоритетов дальнейшего развития ансамбля площади Республики Еревана. К ним относятся: переоценка ансамбля и открытых пространств; разработка пространственных, транспортных, визуальных, эстетических, функциональных и символических ограничений; всестороннее исследование, паспортизация и восстановление архитектурного облика зданий; реконструкция окружающей застройки и регламентация дальнейшего строительства; регулирование транспортных потоков и вынос автопарковок.

ZHORA EDVARD SAGARYAN

CURRENT ISSUES OF ENSURING THE COMPOSITIONAL INTEGRITY IN YEREVAN'S REPUBLIC SQUARE

ABSTRACT

In modern cities, squares, like other large public spaces, face a range of challenges, including the decline of public life in its various forms due to globalization and technological advancement, the transformation of social interactions, and the loss of individual and local identity. These processes have ultimately weakened the functional role of public squares. Within this context, Republic Square in Yerevan stands out, having been formed not only as the city's administrative and public center but also originally envisioned as the principal symbol of the reborn state and its capital. For many years, it guided the city's spatial scale and served as a benchmark across all levels of compositional and artistic urban design. However, in recent decades, amid the dominance of private interests over public ones and a widespread public disengagement from key urban issues, the square has gradually lost its former significance and qualities. The privatization of most surrounding buildings, intensive construction in adjacent areas, ambiguity in urban planning regulations, and governance shortcomings have all weakened the square's role in shaping the image of the city and enabling civic life.

This study summarizes the historical emergence of urban squares and, through the analysis and comparison of various cases, identifies the defining features of their compositional formation. The investigation of examples from different historical periods and locations reveals a set of consistent characteristics influencing square composition: core compositional principle, the presence and role of a dominant element, the existence of a central feature, the degree of spatial enclosure, proportional relationships, and functional purpose.

The historical development of Yerevan's Republic Square is discussed in detail. A periodization of the architectural evolution of the ensemble is provided. The study demonstrates that challenges encountered during its design and construction stages significantly shaped the square's later transformation, altering Alexander Tamanyan's original concept. The study also analyzes the architectural, urban planning, transportation, and environmental issues that have emerged during the post-Soviet period. The findings confirm that the challenges and initiatives introduced during this time have diminished the square's urban and civic significance. The current issues observed within the compositional ensemble of Republic Square are grouped into four key categories: spatial organization and design, circulation systems, visual perception and aesthetics, and alignment with the square's intended role. The study also systematizes the proposals, ideas, and design approaches formulated during various stages of the square's development. It includes an analysis of the issues identified in this research and in prior proposals, summarized through

their comparison and evaluation alongside the conceptual recommendations put forward in the study.

The research concludes that the multitude of identified problems stems from a broader disruption of compositional unity. A detailed examination highlights the core causes, effects, and risks associated with these challenges. The systematization of historical proposals reveals both shared patterns and recurring blind spots. It is further substantiated that the absence of a clearly formulated project brief has impeded the development of comprehensive planning solutions.

The study concludes by outlining key priorities for the further development of Republic Square's ensemble. These include re-evaluating the significance of the ensemble and its open spaces; defining spatial, movement, visual, aesthetic, functional, and symbolic parameters; conducting in-depth research, documentation, and restoration of the architectural identity of the buildings; reorganizing surrounding development and regulating future construction; managing traffic flow and relocating surface parking.